

Տ Ա Ր Ե Ր Ք

Կ Ե Ն Գ Ա Ն Ա Ռ Ա Ն ՈՒ Թ Ե Ա Ն

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ ՈՒ Թ Ի Ի Ն



ՆԱԳԱՏՄՈՒԹԵԱՆ, մէջ Դաւախարդութիւն ըսելով կ'իմանանք այն կտոր-  
կտոր և կանոնը, որով կը բաժնենք զկենդանիս իրենց մէջ եղած մերձաւոր  
կամ հեռաւոր յատկութեանց, նմանութեանց և վերաբերութեանց համե-  
մատ: Յատկութիւնն մոտեւոր և առանձին նշան մ'է, և ասոր ձեռքով է-  
ականք կամ բազմութիւն էակաց միւսներէ կ'որոշին, և առանձին դասեր, ազ-  
գեր, տոհմեր, տեսակներ և կամ անհատներ կը կազմեն:

Որոհաւ կ'անուանի առանձին առնուած էակ մը որ կատարեալ ամբողջութիւն կը  
կազմէ: Իսկ նմանանշատից ամբողջութիւնը՝ որք մի և նոյն ծագումը, բնութիւնը և  
յատկութիւնը ունին՝ զանազակ կը կազմեն: Տեսակի մը էական և կտրւորողայն յատ-  
կութիւնն այս է՝ որ իւրաքանչիւր անհատը կտրեւոր զիրար փոխադարձաբար բեղ-  
մնաւորել, և իրենց նման անթիւ էականք յառաջ բերել: Այլ և այլ տեսակներ որք  
իրենց ներքին յատկութեանց և արտաքին ձեռք մէջ մեծ նմանութիւն մ'ունին՝ կը  
կազմեն ազգը, իւր նոյն յատկութիւնը ունեցող ազգերը իրարու հետ բաղդատենք,  
կը տեսնենք որ շատերն իրարմէ աննշան յատկութեամբ կը զանազանին: Ինչ-  
պէս այլք աւելի կարեւորագոյն յատկութեամբք յիրեւրաց կ'որոշին: Արդ, իրարու  
աւելի մերձեցող ազգերն 'ի մի խմբելով՝ տոհմ կամ ընտանեաց զայրմ կ'անուանենք:  
Ջարմերը՝ որ կարեւոր և հասարակ յատկութիւն մ'ունին, թէ և մէջներին նշանա-  
ւոր տարբերութիւնք ևս ունենան, կարգիւ կը կազմեն: Յետինքս ալ իւրաքանչիւր  
անհատի յատուկ եղող՝ աւելի ընդհանուր և աւելի ընդարձակ յատկութեամբ մը

միանալով՝ կը ձևացնեն զդրսու: Հուսկ ապա դասերն ևս մի և նոյն ոկգրամբ կրնան 'ի տիպս, կամ թէ ըսենք կենդանական դասակարգի նախնական բաժանմանց վերածուիլ: Այսպէս ուրեմն Դասակարգութեան մէջ տիպք կը տրուին 'ի դասս, դասք 'ի կարգս, կարգերն 'ի զարմս կամ 'ի տոհմս, տոհմք՝ յազգս, և սզգիրն 'ի տեսակս՝ որք անհատները կը պարունակեն:

129. Դրագումն տևալիսց. — Այսօրուան օրս տեսակաց ծագումը գիտութեան մէջ ամենամեծ խնդրոյ նիւթ եղած է: Կ'ուզեն գիտնալ թէ կենդանեաց, ինչպէս նաև բուսոց ամէն տեսակները, արդեօք առանձին առանձին ստեղծուած են. կամ թէ ըսենք, արդեօք իւրաքանչիւր տեսակ միւսներէ անկախ ծագում մի ունեցած է:

Կենդանեաց այլ և այլ տեսակներու կազմակերպութեան մէջ աստիճանաւոր անցք մը նկատելուն պատճառաւ, կարծեցին թէ ամէնքն ալ փոփոխակի այլա-կերպութիւնք կրելով իրարմէ սերած ըլլան. և ամենապարզ կազմութիւն ունեցող-ներէ՝ բարձրագոյն կազմակերպութիւն ունեցողք յառաջ եկեր են:

Սակայն այժմեան գիտութիւնն այս հարցման որոշակի պատասխան մի դեռ չէ կարող տալ:

Այն որ հաւանականագոյն է, և զոր աներկիւղ կրնանք ենթադրել, այս կը համա-րի՝ որ աշխարհիս վրայ գտնուող հիմակուան կենդանեաց անթիւ տեսակները՝ աւելի սահմանեալ թուով նախածնողաց տեսակներէ յառաջ եկած ըլլան: Սակայն երբեք չենք կրնար իբր ստույգ հաստատել, ինչպէս ոմանք կը պնդեն (Ղամարք, Տա-րուին, և այլք), թէ ամենայն տեսակք յառաջ եկած ըլլան ամենապարզ կազմու-թիւն ունեցող էակաց յաջորդաբար աճմանէ և այլակերպութենէ. օրինակ իմն խորչերէ կամ ջրածնիներէ:

130. Բաժանումն կենդանական դասակարգի. — Արդի Կենդանաբանք զկենդանիս բաժնելու համար Փիւվիէի Դասակարգութիւնը իրենց իբր հիմն կ'առնուն, և տեղ տեղ միայն՝ զայն կը փոփոխեն: Այսօրուան օրս բազմաթիւ Կենդանաբանք զատոնք հիտեալ կերպով կը դասակարգեն.

#### Ա. ՈՂՆԱԻՈՐԹ

Ա. ՍՏՆԱԻՈՐԹ — Բ. ԹՈՋՈՐԹ — Գ. ԶԵՌՈՐԹ — Դ. ԵՐԿԱԿԵՆՏԱՂԹ — Ե. ԶԿՈՐԹ

#### Բ. ԿԱԿՂԱՄՈՐԹԹ

Ա. ԳԼԽՈՏՈՐԹ — Բ. ՈՐՈՎԱՏՆՈՏՈՐԹ — Գ. ՇԵՏԱԽՈՒԿԹ

Դ. ԹԵԻՈՏՈՐԹ — Ե. ԲԱԶԿՈՏՈՐԹ

#### Գ. ՅՕԴՈՒԱՄՈՏՈՐԹ

Ա. ՄԻՋԱՏԹ — Բ. ՍԱՐԳԱՋԳԻԹ — Գ. ԻՆՏԵՄՈՐԹ — Դ. ԲԻՒՐՈՏՈՐԹ

#### Դ. ՈՐԴՈՒՆԹ

Ա. ՏԱՐԿԱՅԻՆԹ — Բ. ՃՃԻԹ

#### Ե. ՃԱՌԱԳԱՅԹԱՋԵԻԹ

Ա. ՍԱՅՐԱՄՈՐԹ — Բ. ԳԱՏԱՐԿԱՅԻՆԹ

#### Զ. ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻԹ

Ա. ՍԱՐԳԱՅԻՆԹ — Բ. ԱՐՄԱՏՈՏՈՐԹ — Գ. ՋՐԱՃՃԻԹ

## Ա. ՈՂՆԱԽՈՐՔ

131. Ողնաւորք. — Ներքին ոսկրային կմախք ունեցող կենդանիք են, և այս կը մտնէր գոնիս ողնայար մի սննի. ծննդագործութիւննին սերական է, և արիւննին կարմիր: Ինչպէս վերն ըսինք՝ Հինգ դաս կը բաժնուին: Ա. Ստնաւորք, Բ. Թուլունք, Գ. Զոռունք, Դ. Երկակեցաւորք, Ե. Զկունք:

## Ա. ՍՏՆԱԽՈՐՔ

132. Ստնաւորք. — Ի ծննդենէ թոքերով կը շնչեն և դիւցման գործարանք ունին. ստեղծութիւն կենդանիք են և իրենց արեան շրջանը կատարեալ է: Ստեղծութիւն չորս խոռոչ կը բաժնուի՝ երկու բլթակ և երկու փորոք. մարմիննին մազերով ծածկուած է: Կենդանածին են, իրենց ծնօտը գտնելի հետ միացած է:

Այս դասը յետագայ կտրգեբու կը ստորաբաժանենք.

- Ա. Մարդիկք
- Բ. Կապիկք
- Գ. Մարկարեք (Շիկահաւ, Վամբիր, Զիղլ).
- Դ. Միջատակերք (Խուրդ, Մկնաքիւ, Ողնի).
- Ե. Մասկերք (Աւիւծ, Վագր, Գայլ, Աւշ, Կատա).
- Զ. Լողակոտունք (Փոկ, Մովստու).
- Է. Կրծողք (Նապաստակ, Արջամուկն, Կուղք, Մկնիկ).
- Ը. Անաստանունք (Խեցերէ, Թեփամուղէք, Մեծագազան).
- Թ. Պոռճողք (Եղ, Ողխար, Այծ, Ողտ, Ընձուղտ).
- Ժ. Թանձրամորք (Զի, Փիղ, Ռնգեղլիւր, Հնագազան).
- ԺԱ. Կիտաղգիք (Միաժանի, Դիւին, Կէտ).
- ԺԲ. Պարկաւորք (Ագեփալ).
- ԺԳ. Միաժակք (Յակեղ).

## Ա. Մարդիկք


133. Մարդիկք. <sup>1</sup> — Ողնաւորք են և շորս անգամք ունին, յորոց երկու վերինք ձեռք կը վերջանան և երկու ստորինք ոտիք: Յոտից վրայ կանգուն կը կենան. ատամնային գրութիւննին կատարեալ է և ի շտապ ատո յերեսուն և երկու ատո մանց կը բաղկանայ: Ստինք լանջային են, և ջրային գրութիւնը միւս ամէն կենդանեցմէ աւելի կատարեալ է:

Կենդանաբանական այս հիմնական յստկութիւններէ զտա, դարձեալ կ'որային միւս կենդանեցմէ բանաւորութեամբ, բարոյական զգացմամբ, յոժարութեամբ և յաշուաբեալ խօսքով:

Մարդկային ցեղի մէջ մասնաւոր դատաւորութեան արժանի կը համարին գտնիկ կազմութիւնը, որ նոյն գտնիկ ոսկերաց աննման կերպով ամճանէ և զանազան դը

(1) Ստնաւորաց առաջին և երկրորդ կտրգէ Մարդիկք և Կապիկք անուանել լուաղայն համարեցանք, քան իշխանի և Գոմարի, ինչպէս մինչև ցարը սովոր էին զստնք կոչել. վասն զի կան Կապիկք տեսակներ որք երկու ձեռք և երկու ոտք ունին, և հետեալք կրնան իշխան երեսու հետ չփոխել:

րիւք կենալէ կախումն ունի: Հետեւաբար երկրորդագոյնի կը կոչեն այն դանկը՝ զոր եթէ բարձրէն դիտելու ըլլանք, կը տեսնենք որ յառաջակողմանէ դէպ յետակողմն երկարեալ ձև մ'ունի: Լայնագոյնի կ'ըսուի երբ բոլորումն է. և միջնագոյնի՝ երբ ոչ երկայնագոյնի է և ոչ լայնագոյնի: Գործնաւ ուղիւստ կ'ըսուի այն դանկը՝ որոյ ճակատն 'ի բնէ ուղղահայեաց գծի մը վրայ կը կենայ, որով և երկու ծնօտից ոտա մուկնք գրեթէ մի և նոյն ուղղութեամբ գիրար կը շշտփեն, իսկ յառաջնածնօտ կ'ըսուի՝ երբ երեսաց ռակերքն առ 'ի շեղ կը կենան, որով և դուրս ցցուած ծնօտից ատամունքն իրարու հանդիսելով սուր անկիւն մը կը կազմեն:



Չկ. 129.

Երեսաց անկիւն

Ասկից 'ի զատ մարդկային ցեղը լատաղոյն ևս ճանչնալու համար պէտք է դիտել նաև Քամբէռի երեսաց անկիւնը: Այս անկիւնն երկու ուղիւ գծից իրարու հանդիպելէն կը ձևանայ. յարոյ մին՝ ճակատի՝ քթի արմատին և վերին ծնօտից գուգահէ. ռական կ'ընթանայ. իսկ միւսն՝ ականջաց արտաքին լատան փողէն. մեկնելով՝ կու գայ առաջին գծին կը հանդիպի և անկիւն մը կը կազմէ (Չկ. 129): Փորձն յայտնած է որ այս անկիւնն որչափ աւելի մերձաւոր ըլլայ 90°-ի, մարդու բանավարութիւնն ալ այնքան զարգացած կ'ըլլայ. և որչափ աւելի նուագի՝ բանավարութիւնն այնքան նուագ կ'ըլլայ:

134. Մինչև ցարդ մարդկային ազգը զանազան Բնապատումներէ այլ և այլ եղանակով զստաւորուած է. սակայն այս դասակարգութեանց մէջ աւելի ընդհանուր և ամենէն ընդունելի եղածն յետինս է՝ որով զանազ չորս ցեղ կը բաժնենք. այսինքն են Սպիտակ կամ Կովկասեան ցեղ, Գեղին կամ Մոլդոնեան ցեղ, Խափշիկ կամ Եթովպեան ցեղ, Պղնձագոյն կամ Սիւրիկեան ցեղ:

135. Սպիտակ կամ Կովկասեան ցեղ. — Այս ցեղի գլխաւոր յատկութիւնքն են հակթածե երես, մեծ աչքեր, դուրս ցցուած քիթ, գանկն ուղղածնօտ՝ լայնագոյն կամ միջնագոյն, երեսաց անկիւնն 82° - 88° աստիճանաց մէջ կը պարունակուի.



Չկ. 150. Հնդիկ



Չկ. 151. Գերմանացի



Չկ. 152. Չինացի

մորթեւնին մարմնագոյն, հատուկին բարձր կամ միջակ, մազերնին զանազան կոյնեքով՝ երբեմն ուղիւ և երբեմն գուռ գրկայն և խիտ, նոյնպէս նաև մորուաց գոյնը զանազան, խիտ՝ ուղիւ կամ գուռ:

Այս ցեղը տարածուած է Եւրոպայ, Ասիոյ արևմտեան և հարաւային արևմտեան կողմը, և Աֆրիկէի հիւսիսային կողմը: Իրեն կը վերաբերին Հայք, Հնդիկ (Չկ. 130), Հնդկապարսիկք, Քիւրաք, Յայնք, Իսաւաքիք, Կեղսք, Գերմանացիք (Չկ. 131) և Սլաւք:

136. Դեղին կամ Մոզոլիան ցեղ. — Մոզոլեան ցեղի յատկութիւնքն են՝ բոլորաձև երես, փոքր և խոտոր աչքեր, փոքր քիթ, կարճ կզակ, գանձն յառաջածնօտ՝ երկայնազուլի կամ լայնազուլի, երեսաց անկիւնը 75°-78°, մազերնին անօտր՝ կարծր երկայն և ստուար, ձեռք և ոտք փոքր, մարմնով դէր և դեղնագոյն, հասակնին խիստ փոփոխական, ըստ բաւականի բանաւորք են:

Այս ցեղը տարածուած է Եւրոպիոյ և Ասիոյ հիւսիսային կողմերը, Ասիոյ կեդրոնն և արևելքը, մաս մի Ովկիանիոյ և յՍմերիկա՝ Իրեն կը վերաբերին Մոզոլի, Թոնդուդք, Սարմատացիք, Չինացիք (Չև 132), Ճաբոնացիք, և այլն:

137. Խափշիկը կամ Երովպեան ցեղ. — Եթովպեան ցեղը միւս ցեղերէ հետեւեալ յատկութեամբք կ'որոյի, գանկը յառաջածնօտ և երկայնազուլի է, երեսաց անկիւնը 68°-72°, աչք փոքր և ճնշեալ, քունքալծային ոսկերքն դուրս ցցուած, չըրթունքն ստուար և ուռուցեալ. մազերն բրդոտ, մարմնք կարճ և խիտ, անդամքն նուրբ, և վերինք՝ միւս ցեղերու վերին անդամոցմէ աւելի երկայն. մորթերնին սեւա կամ թուխ և 'ի բնէ իւղային:

Այս ցեղը տարածուած է յՈվկիանիոս, Ալբերիկէի կեդրոնը և հարաւը, և ըստ մասին Ասիոյ հարաւային արևելեան կողմերը: Իրեն կը վերաբերին Խափշիկք (Չև 133), Օդենդացիք, և այլք:



Չև 133. Խափշիկ



Չև 134. Մալսիցի

138. Պղնձագոյն կամ Ալերիկիան ցեղ. — Ալերիկեան ցեղի յատկութիւնքն են բրդաձև ոսկրային գուլի, գանկ՝ յառաջածնօտ երկայնազուլի, երեսաց անկիւնը 72°-80°, աչք փոքր, քունքալծային ոսկերք և ծնօտ դուրս ցցուած, իրան և անդամք համեմատական, հասակնին բարձր, մորթերնին կարմիր, պղնձագոյն և կամ թխագոյն:

Այս ցեղը տարածուած է 'ի կրկին Ալերիկայոս. և ասոր կը վերաբերին Գալիֆոնիայիք, Մեքսիկացիք, Պրագիլիանք, Մալայցիք (Չև 134), և այլն:

### Բ. Կապիկք

139. Կապիկը. — Կապկաց դասը միանգամայն փառսմունքի կ'անուանին. վասն զի այս կենդանեաց թէ առաջակողմեան և թէ յետակողմեան անդամքն սովորաբար ձեռք կը վերլանան. այս ինքն է չորս անդամոց մէջ ալ՝ բթմամտը միւս մաստանք ընդդիմադիր է: Այս մատերն երկայն և ամենաշարժուն են, անոր համար թէ և երազազոյնք և յարմարազոյնք մագլցելու, և ծառոց վրայ շարժելու և վազվազելու, ուր միշտ կը բնակին, սակայն երկրիս վրայ քայլելու անյարմարք են և սովորաբար չեն իջնէր, բայց եթէ ստիպեալք 'ի թշնամեաց և յանօթութենէ:

Դարձեալ, Կապիաց մատուրներն Մարգոս մատանց նման եղնգուտը են. և յե. տակաղմեան անդամաց բթամասն՝ յառաջակողմեան անդամաց բթամաստէն աւելի մեծ է: Սովորաբար փայր կամ միջանառակ են, գտնիներին բոլորածն է, ցրուակնին ընդհանրապէս քիչ զուրո ցցւած, պարունոցիւն կարճ, մարմիննին խիստ և միջակ մազերով ծածկուած, պտղակերք են, աստամնային դրութիւննին մարգոս առ տամնային դրութենէն քիչ կը տարբերի: Զարմիր կը կաղմեն և խումբ խումբ տաք երկիրներու մէջ կ'ապրին:



Ձև 155. Օրանկ-ու-թանկ



Ձև 156. Կօրիշ

140. Բաժանումն Կապիաց — Կապիաց զանազան տեսակ դասաւորութեանց մէջէն պարզագոյնն ընտրելով՝ զանոնք 'ի Ստոյց Կապիկս և 'ի յԱրուեստացուիս կը



Ձև 158. Շնագլուխ Կապիկ



Ձև 157. Մանգրիշ

բաժնենք: Բաժանումն այս յատկութեանց վրայ կը հիմնուի՝ որ յետնոց ցուռնն որ. բաժայր և յետակողմեան անդամաց բթամասի եղունգն երկայն, անջատ և սուր է:

Ստույգ կապիկը՝ զարձեալ Հին աշխարհի և Նոր աշխարհի կը ստորաբաժանին։ Առաջնոց ռնգունքն ստորաբաժանն է և նրադոյն թաղանթով մը իրարմէ կը բաժնուին։ մինչդեռ յետնոց մէջ Նայ՝ ռնգունք մէկմէկէ հեռու են և կողմնակի կը բացուին։ Հին աշխարհի կապկաց մէջ միայն՝ պոչ չունեցող տեսակներ կան և ամէնքը բերանապարկ ունին, ուր յաւելած կերակուրքն կը հաւաքեն։ Իսկ Նոր աշխարհի կամ Ամերիկեան կապիկը՝ ամէնքն ալ պատասաղ երկայն պոչեր ունին, և կրնանք ըսել թէ այս կենդանեաց շարժականութեան իբր հինգերորդ գործարան կը համարի։



Ձև 139. Ուխտիթի



Ձև 140. Մաքի

Հին երկրի բազմաթիւ կապկաց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանաւորք են Օրանկ-ու-թանկ (Ձև 135), Կորիլ (Ձև 136), Շիմիանդէ, Մագաբ, Մանդրիլ (Ձև 137) և Ալբիլիկայ շնագլուխ կապիկներն (Ձև 138)։ Նոր երկրի կապկաց մէջ Միչէթը, Չէպը և զաւան Ուխտիթիք (Ձև 139)։ Իսկ Ալուէսացուի կապկաց զարմի կը պատկանին Ունաբերձը, Մաքիք (Ձև 140), և այլն։

Այս կենդանիք 'ի բնութենէ անձնական պաշտպանութեան յատուկ միջոցներ չունենալով, իրենք գիրենք 'ի թշնամեաց պաշտպանելու լաւագոյն միջոց զփախուստ համարած են։ Եւ որովհետեւ տրտաքոյ կարգի երազ են 'ի շարժմանս, և յետին աստիճանի դիրազգածք, այն պատճառաւ խիստ դժուար կ'որոտցուին։

141. Օրտակախորիւնք Կապկաց. — Կապիկներն մարդկանց ուղղակի վնասուկարք չեն։ սակայն քանի մի տեսակներ թէ բազմաթիւ և թէ պաղակերք ըլլալովնին, մշակալ երկիրներու մեծամեծ վնասներ կը հասցընեն, շատ մը պտուղներ ուտելով և փճայնելով։ Օգտակարութիւննին ամենաքիչ է. յԱմերիկայ Հնդիկներն ասոնց քանի մի տեսակքն կ'ուտեն և շատերուն մորթը կը գործածեն։

#### Գ. Մաշկաթեւք


142. Մալիարիք. — Գլխաւոր յատկութիւննին տանք են։ Իբր թաղանթ մը իրենց չորս անդամոց և մատանց մէջ տարածուելով, միայն յետակուցման անդամոց ծայրերն ազատ կը թողու. և տառակողման անգամներու թեւոց նմանութիւն կուտայ։ Հերձատամունք փոքր են, շնատամունք զօրաւոր, աղօթեաց պոսակն 'ի միջատակեր տեսակս սրածայր կէտեր ունի, իսկ պտղակիր տեսակաց մէջ գրեթէ կապիկներու աղօթեաց նման է։ Առաջակողմեան անդամոց մատունքն երկարաւորք են։ Իսկ յետակողմեանց բթամատը միւս մոտանց ընդդիմադիր է։

Գլխուոր տեսակքն են Շիկահու, Զիղլ (Ձև 141), Վամբիր, և այլն: Քոսնի մի տեսակներ ձմեռնային եղանակը քնափութեամբ կ'անցընեն՝ յետակողմեան անդամը տեղէ մը գլխիկայր կախուելով:

143. Օգտակարութիւնը Մաշկարեոց. — Հասարակ ժողովրդեան կտրծիքն է թէ Մաշկաթեք զագիր և փնասակտր կենդանիք ըլլան. բայց իրենց այս նախապաշտումը գրեթէ սխալական կրնանք համարել՝ վասն զի մշակութեան ամենէն աւելի փնաս



Ձև 141. Զիղլ



Ձև 142. Գլուխ Վամբիրի

ուակտր կենդանիքն երկրէս կը ջնջեն: Սակայն պէտք է այս ալ խոտովանիլ որ կան նաեքանի մի փնասակտր տեսակներ, և պտղակեք ըլլալով շատ պտուղ կը փնայնեն:

Առասպելաբանն պատմութիւն համարելու է Վամբիրի վրայ պատմութեամբ, որ հասարակին Սմերիկայ միջին մեծութեամբ Մաշկաթեք մ'է (Ձև 142), իբր թէ երբ մարդըս անխոհեմաբ բացօթեայ կը քնանայ, վրան կը յարձակի և այն աստիճանի անոր արիւնը կը ծծէ՝ մինչև մարգտ արեան նուազութենէ կը մեռնի: Սոցի է որ Վամբիրն երբ յարմար առիթ գտնէ՝ մարդուս վրայ կը յարձակի, ինչպէս նաև մեծամեծ Չորքոտանեաց վրայ ալ. բայց իւր ծծած արիւնով ոչ միայն մահ չի պատճառեր, այլ և ոչ իսկ պզտի փնաս մի կարող է հասցունել:

## Գ. Միջատակերք

144. Միջատակերք. — Միջատակերք՝ զոր ոմանք Մոսկերաց դասու ստորաբաժանում մի կը համարին, փոքր Սանաւորք են (Ձև 143), և հետեւեալ յատկութիւնքն ունին. իրենց ցուպն երկայն և սուր է, աստմնային դրոթիւնն կատարեալ, և աղտիք բազմաթիւ, միտնգամայն փոքրիկ սրածայր փշակնելով. այնպէս որ ընդ



Ձև 143. Տեման

զիմագիր ազօրեաց փութելուն կը համապատասխանեն. և այս դրից սրածառու իրենց որսը զիրաւ կը ծաքեն: Ուքերնին կարճ՝ զօրաւոր մագիլներ ունին և երկիր փորելու խիստ յարմար են, ուր սողորկրեայ բնակարաններ կը չինեն՝ ոմանց բնակութեան,

այլոց ձմեռնային եղանակը քնափութեամբ անցընելու համար:


Գլխուոր տեսակքն են, Խլուրդ (Ձև 144), Ոչնի (Ձև 145), Մկնաքիս, և այլն: Խլուրդի մարմը խիստ կակուղ է. գետնի տակ կը բնակի և մեծու երազութեամբ զերկրի կը փորէ՝ Միջատաց թրթուրներ գտնելու նպատակաւ, որովք և կը սնանի:

145. Օգտակարությունը Միջատակերաց. — Թէ և այս կենդանիք մշակութեան մետատկոր բազմաթիւ միջատներ կը ջնջեն, տակայն իրենց երկիր փորելու ունեցած



Ձև 145. Ուշի


չար սովորութեան պատճառաւ շատ մետաներ ալ կը հասցընեն, և չեն թողուր որ բոյր կարգաւորեալ սնունդ անուն:



Ձև 144. Խուրդ

## Ե. Մսակերք

146. Մսակերք. — Ինչպէս վերոյիշեալ գոտուց կենդանեաց, այսպէս նաև Մսակերաց մէջ ատամնային գրութիւնը կատարեալ է, և մանաւանդ ուժով և զօրաւոր ատամունք ունին, շնոտամունք յաճախ երկայն և կորածն են, աղօրթը՝ սառաւ, ճնշեալ և հոտու պտակներով, որք ընդդիմադիր ատամնոց մկրատի մը լեզուաց նըման կը համապատասխանեն. և այս գրից պատճառաւ իրենց որսը զիւրաւ կը յա-




Ձև 146. Առիւծ

սնակներ կան որ սոպիւ մոակեր միայն ըլլան. այսպէս Առիւծք (Ձև 146), Վագերք (Ձև 147), Յովազք (Ձև 148), գրեթէ սոսկ գլործողս կ'ուտեն. Կզաքիք փոքր Սնակարներով և յաճախ ևս թաշուններով կը սնանին. և այլք՝ օրինակ իմի Բարենիք (Ձև 149), մեռելոց գլակներ կ'սխալթին: Բայց տաճց, կան սնայիսիք ալ որ հաւասարապէս թէ մսակեր և թէ սնկակեր են. կան նաև աւելի սնկակերք՝ քան մըսակերք:

չեն և կը մանրեն: Կռուկնին կարծ է. միջահասակ կամքիչ մ աւելի մեծ կենդանիք են. իրենց շորս անգամեն ալ ճիրաններով կը վերջանան, մարտողական կազմարանը կերակրոց տեւտակին կը համապատասխանէ, հետևորոր ստամոքսն պարզ՝ և միջակ ընդունակութիւն մ' ունի, իսկ ընդերքն կարծ է:


Մսակեր կենդանիք, ինչպէս յանուանէ ևս կը տեսնուի, ամէնքն ալ մամուլ և կամ մեծաւ մոտամբ կենդանական նիւթեր ուտելով կ'ապրին: Սոկայն քիչ

Իրենց զգայորանքներն և ջղային դրութիւնն ամենակատարեալ է: Առհասարակ Ստուաորաց բաղդատութեամբ՝ միջնատակ են. սակայն 'ի Մաշկաթեաց և 'ի Միշտակերաց շատ աւելի մեծ: Այս դասու ամենափոքր կենդանիքն Օձամարտ և Կըզաքիս կենդանեաց խումբերու մէջ կը նկատենք, իսկ ամենամեծքն Կատուի խումբի մէջ: Ամենքն այլ ցամաքայինք են. երկրիս վրայ երապութեամբ կը վազեն, և շատերը մեծու դիրութեամբ մազլցելով ծառաց վրայ կ'ելլեն:



Ձև 147. Վագր


147. Բաժանումն Մաշկիւրաց. — Մասկերք երկու տոճմ կը բաժնուին. Մատնադնացք և Ներքամազնացք: Առաջինք Մատնադնացք կ'ըստին՝ վանս գի սովորաբար մատերու ծայրով կը քալեն, բարձրացնելով ստից ուլը՝ որպէս զի սաքերնին յերկիր



Ձև 148. Բովազ

չդպի: Ասոնց աղօրեսաց պոսակը փոսկային է, չարժմանց մէջ երազագոյնք են. բոտոյք մտակեր կենդանիք կը համարուին, և իրենցմէ սակաք միայն, ինչպէս Բարենիք, ապականեալ գիականիւրով կը նմանին: Գլխաւոր ազդերն են Ժանտակուզք (Ձև 150), Կըաքիսք, Ջրադուէք (Ձև 151), որք իւրաքանչիւր ծնօտի վրայ մի մի փըշա կաւոր առամուռք ունին: Երկայնաձև՝ վտիտ և ցած ըլլալունս պատճառաւ Որդեա-

ձև Մատկիյը կոչուած են: Զորաւոր հոտ մը կ'արձրկեն՝ որ սրբանի մերձ գտնուող երկու գեղձերէ զատուցուած գորշահոտ հեղանիւթ է մը յառաջ կու գայ:



Չև 149. Բորենի

չիւր կողմերը գտնուող շողջակեր ատումանց՝ երկերկու փշտկաւոր աստամուձք կը յաջորդեն: Զիւրենց յատկացնողն գլխաւորաբար ատամնային գրութիւնն է: Աւա-  
լակովման ուրքերնին հինգ մօտ ունին, յիսուկայմանք չորս. ինչունին ողորկ է:



Չև 150. Ժանտակուզ

կունք կ'ախորժին: Սովորաբար սիլաճասակ կենդանիք են, զօրաւորք, ուժեղք և երազոյարժք:



Չև 151. Զրազուէս

չիւր ցորեկ հուսասարուպէս կը տեսնեն: Մնօտնին զօրաւոր հերձատամամբք. հա-  
սակաւ մեծ շան մը կը հաւաստորին. առջևի ուրքերնին ՚ի յետնոց աւելի երկայնք են.  
կարճ պոչ մ'ունին, միսնզամայն ստուար և բութ ցուռ մը (Չև 149):

Աստիցմէ զատ  
Մատնագնացից տու-  
մը կը բովանդակէ  
յինքեան հոտն, Բորե-  
նոյ և Խառնի ազ-  
գերն:


Շան ազգ. — Շան  
ազգն կծկական ե-  
ղունգներով Մըսու-  
կներնրէ կը բաղկա-  
նայ: Վերին ծնօտի  
վրայ երեք սուտ աղօ-  
րիք ունին, և ստոր-  
նայ վրայ չորս, իսկ եր-  
կու ծնօտից իւրաքան-

Մսակերայ սէջ մանկն ս.ե-  
լի բանաւորքն են, զգայարմը-  
նին ամենանաւորէ, մանաւանդ  
հոտաւ ութիւննին: Ընկերու-  
թեամբ կ'ապրին, երբեք չեն  
մազլցեր, այլ իրենց որսը վա-  
զելով կը բռնեն: Կենդանա-  
կան նիւթոց հետ կանաչեղէնք  
ալ կ'ուտեն, և նեխեալ դիա-

Այս խումբը կը բաղկանայ  
սովորական ընտանի Շներէ  
(Չև 152, 153) ինչպէս և զա-  
նազան տեսակ Գայլերէ (Չև  
154 ու Աղուէսներէ:

149. Բորենոյ ազգ. — Այս  
կենդանեաց իւրաքանչիւր ոտ-  
քը քառամատն է, որք կարճ,  
ստուար՝ զօրաւոր և միանգա-  
մայն երկիր փորելու յարմար  
եղունգներ ունին: Լեզունին  
խորտաբարտ է, աչքերնին հրա-  
վառ և փալփուռն որոցմով գի-

150. Կատուի ազգ. — Համայն Մատերաց մէջ միաներէ տաւի ոպաւադինեայք  
առոնք են: Մնօտին ամենակարճ է և դորսւոր մկունքներ ունի, որոց խրաքանչիւ.




Ձև 152. Ընթարդ Շուն

րին երկերկու կողմանց վրայի շողղակեր ատամանց՝ երկերկու ստուար աղօրիք կը




Ձև 153. Գանգրահեր Շուն



Ընթարդ

Ձև 154. Գայլ

Ընթարդ



Ձև 155. Յանուար


Հմեռնային եղանակը քնափութեամբ կամ անընդհատ թմրութեամբ կ'անցունեն:

յաջորդեն: Եղունգնին ներք. սաձիգ է, զոր հանգստեան մի. շոց մատանց մէջ կ'ամփոփեն: Աւաղակողման ատքերն հինգ մատունք ունին, իսկ յետակող մեանք չորս: Լեզունին խորտա. բարտ և եղջերեայ կ'էտերով ծածկուած. իսկ մազերնին սո. վրարար փափուկ և ազնիւ է:

Այս դասու կը վերաբերին Սոխի (Ձև 146), Յանուար (Ձև 155), Վագր (Ձև 147), Յռ. վաղ (Ձև 148), Ընձառիւծ, Հա. տորակ կատու (Ձև 156), Լու. տանն, և այլն:

151. Հերրաւագնացը. — Զի. բենք յատկացնող այս է որ՝ իւրաքանչիւր սոսից վրայ հինգ մա. տունք ունին, և կենդանին քա. լած կամ կանգուն կեցած մի. շոց՝ ամբողջապէս սոսից ներքա. նին վրայ կը հանգչի. իսկ յե. տա՝ ողման սոսից վրայ մեծաւ գիւրութեամբ ուղիղ կրնայ կե. նալ: Սովորաբար մեծահասակ և գիւրեային կենդանիք են. քիչ շատ ամէն տեղ կը գտնուին, և


Այս բաժանմանս կը վերաբերին Արջը (Ձև 157), Մկնարթը, Իշդարը, և այլն։  
152. Օգտակարութիւնը Մոսկերաց. — Ընդհանրապէս Մոսկերը աւելի փնտա-  
կալք են քան օգտակարը. վասն զի բազմաթիւ օգտակար կենդանիներ կը ննին, որք



Ձև 156. Վայրի կառու.



Ձև 157. Սպիտակ Արջ



Ձև 158. Կզաքիս

փնտաւար կենդանիք ննին կը ջնանան, և մորթերնին կ'առնուն մարդկային կենաց  
օգտակար և կարեւոր եղած զանազան պիտոյից համար 'ի գործ վարելու։

և գիրաւ կը բռնուին դան-  
դաղաչարժ տկար ըլլալուն  
պատճառաւ։


Սակայն այս ալ կայ որ  
Մոսկերաց շատերը մար-  
դու թանկագին մուշտակ  
կը մատակարարեն. բաւ-  
կան է միայն զկզաքիս (Ձև  
158) յիշատակել, որ Աւիոյ  
ցրտագին գաւառաց մէջ կը  
բնակի եւ դժուարամբձե-  
նալի տեղեաց մէջ կը կենայ։  
Այս մուշտակն 'ի վաճառու  
միշտ բարձրագոյն գին մ'ու-  
նի թէ իւր մազերուն փափ-  
կութեան՝ և թէ նոյն կեն-  
դանոյն որսը փառնգաւոր  
և դժուարին ըլլալուն պատ-  
ճառաւ. որով և մորթն ալ  
հազուադիւս է։

Ջրագուէսը լճերու և ա-  
նոյ ջրոց հոսանքը կը յա-  
ճախէ. և միանգամայն շա-  
տակեր ըլլալով՝ անթիւ Ջը-  
կունք կը սպառէ։ Թէ մը-  
տոյն ազնուութեան և թէ  
մանաւանդ թանկագին մոր-  
թոյն համար կը փնտռուի։

Արջն աստիճան մի կըր-  
նայ ընտանենալ. պտղակեր  
է, և կենդանական նիւթեր  
շուտեր՝ բայց եթէ ստիպեալ  
յանօթութենէ։ Իսկ Մըկն-  
արթը ստորերկրեայ բնա-  
կարանաց մէջ օրերնին  
կ'անցունեն, և գիշերները  
միայն անկից դուրս ելլելով  
իրենց փնտաւար շաղաքն  
զարտորայս կը փնտընեն.  
անոր համար դասեք իրր


## Չ. Լուղակոտունք

153. Լուղակոտունք. — Այս դասու կենդանիք քանի մի կենդանաբաններէ Երկակնեցողք կոչուած են. վասն զի թէ և ջրոց մէջ կ'ապրին, սակայն հանգչելու և իրենց սերունդքը թողլու համար ցամաքի վրայ կու գան: Արդ, փոխանակ երկակնեցողք անուանելու լաւագոյն համարեցամք Լուղակոտունք յորջորջել. որովհետեւ այս նոր անունը մէկ կողմանէ վերայիշեալ կենդանեաց անգամոց կազմու կերպով թիւնը մեզ կը յիշեցընէ, միւս կողմանէ Երկակնեցողք ըսուած դասու կենդանեաց հետ շփաթելու խառնակութիւնը ի միջոյ կը բաժնայ:




ՉԼ 159. Փռ

Լուղակոտունք՝ Մսակերաց նման կենդանի որսերով կ'ապրին, և անոնց պէս կատարեալ ստամոքային գրութիւն մ'ունին: Գլխաւոր յատկութիւննին ասոնք են. մարմիննին երկայն է. յետակողման անգամը յառաջակողման անգամոց խիստ կը տարբերին, և չորսն ալ կարճ են, զօրաւոր, լայն, մարմապատ, և աշխարհ կազմակերպութիւն մ'ունին՝ որ լուղալու սքանչելի գործարանք են: Թէ և ջրոց մէջ և քաղաքոցնք, սակայն իրենց մարմնոյն երկարութեան և անդամոց կարճութեան



ՉԼ 160. Մռ



ՉԼ 161. ՄԳԻԿ


պատճառաւ՝ ցամաքի վրայ դանդաղ և տարտամ կը մնան: Որտորք զայս քաջ գիտելով ժայռից մէջ կը պահուրան, և հազիւ թէ կը տեսնեն որ ասոնք զծով կը թողուն՝ իսկոյն գաւազանօք և նիզակօք վրանին կը յարձակին և կ'որսան:

Այս կենդանիք, որոց կը վերաբերին զլխաւորաբար Փռիք (ՉԼ 159), գրեթէ ամէն ծովերու մէջ կը գտնուին: Փռիքրու շատ տեսակներ կան, յորոց իւրաքանչիւրը, ցրտագին գաւառաց ծովերու մէջ, սովորաբար խաղմամբ անհատներէ կը քաղկանան:

154. Ոչտակառարիւնք Լուդակոտանց. — Գրեթէ ամենայն Լուդակոտանք մարդու օգտակար նիւթեր կը մատակարարեն. այս պատճառաւ երկուր ատենէ 'ի վեր որսորդութեան առիթ եղած են, և որով հիմակուան ժամանակ զգալի կերպով իրենց թիւն ալ նստագեցաւ: Մասնաւոր յիշատակութեան արժանի կը համարինք, իւր մեծութեան և երկայն փղոսկրեայ կարծրագոյն ժանեացն հոմար որովք զինեալ է՝ Ծովացալը (Ձև 160), որ հիւսիսային գաւառաց ծովերու մէջ կը բնակի: Յարուեստ այս կենդանեացմէ քաղած գլխաւոր բերքերնիս հետեւեալքն են, մեծաքանակ ճարպ՝ ուսկից վառելու յարգի իւզ մի կը ստանանք. իրենց մարմնը՝ խաղախորդութեամբ սրունելի կաշի կ'ըլլայ, և Ծովացալու ժանկըն՝ սովորական փղոսկրէ շատ աւելի կարծր և մեծ են:

### Է. Կ Ր Ծ Ո Ղ Է

155. Կրծողը. — Կրծողը սովորաբար փոքրահասակ և եղընգաւոր կենդանիք են, որոց յետակողմեան ոտքերն յառաջակողմեանց ու կի բերկայն են: Ընդհանրապէս իւրաքանչիւր ծնոտի վրայ երկերկու զօրաւոր, երկայն և կոր հերձատամանք ունին:




Ձև 162. Նապաստակ



Ձև 163. Սկիւռ

Հնատամանք բոլորովին կը պոկոյին և անոնց տեղ դատարկութիւն մի կը տրիէ: Ստորին ծնօտը գանկի հետ երկայնաձև յօդասեպ սակրով մը միացած է, որուն ձեռք միայն յառաջակողմանէ գէպ յետակողմն կրնայ շարժիլ:



Ձև 164. Հագաղթ



Ձև 165. Մոկ

Բազմաթիւ Կրծողք բուսեղինք և կամ նոյն իսկ փայտեղէն իւրութեւ տառելով կը սնանին: Ոմանք, ինչպէս Մկներն (Ձև 161, 165), թէ՛ բուսեղին և թէ՛ կենդա-

նախան ճիւղեր կ'ոճտեն, մինչև յապակմանալ փնակի։ ամենակեր են և ամառիկ  
կրկրամբք։ Այլք բնակարանաց մէջ կ'ապրին և ուսարառութեամբ ստէպ զայս կը  
նեղեն։

Այս դասու կը վերաբերին Սկիւռ (Չև 163), Արջամուկն, Մուկն, Զրչուն, Նա-  
պաստակ (Չև 162), Զազար (Չև 164), Խոզակ, և ուրիշ։

186. Օղտակարութիւնք Էրծողաց. — Էրծողաց օգտակարութիւնն արդէն իսկ յայտ  
է. չատերուն միան առողջարար և ախորժելի կերակուրք կ'ըլլան, և իրենց մատակա-  
րարած մուշտակը բազմատեսակ պիտոյից մէջ Մարգա կը զործածէ։ Բայց այս օգ-  
տակարութեանց մի մասը Մկներու պատճառած զնասուց առջև կ'անյայտանան։

## Ը. Անատամուկնք

187. Անատամուկնք. — Այս դասու կենդանիք Անատամուկնք կոչուած են, վասն  
զի կամ բուրդովին և կամ մասամբ իրենց ստամուկնք կը պակսին։ Մարմիննին  
մազերով, կամ լայն և կլկմարած անդամք փոխ, և կամ տեսակ միապատենով ծած-  
կեալ է։ Մատանք թիւր, երկայնութիւնը և ստուարութիւնը փոփոխական, և սովո-  
րաբար քիչ շարժական են. իսկ եղունգնին ընդհանրապէս ստուար և երկայն է։  
Մեծու մասամբ 'ի Հարաւային Ամերիկա կը բնակին. սակայն և յայլ կողմանս Ա-



Չև 166. Մրջաբազ

մին՝ բողջատութեամբ այժմեան Անատամանց Հակայան և կենդանիք եղած են։

Հեղգերէից գլուխն թէ և Կապկայ գլխու ձևն ունի, սակայն միւս յատկու-  
թեամբք Անատամն կենդանեաց կը նմանին. անոնց նման ծառոց վրայ կը բնա-  
կին, յայց փոխանակ յեկու ծառոց հիւղերուն վրայ, իրենց զօրաւոր եղունգներովն



Չև 167. Թեփամազէզ

առնենք 'ի ուտեն, և նոյն իսկ տերեւոց վրայ իլած ցօղը բաւական է ծարաւնին չի-  
լուցանելու։ Այնքան դանդաղ ընտելութիւն ունին, որ շարժութով մի և նոյն ծա-  
ռի վրայ անշարժ կրնան կենալ, առանց իսկ մերձաւոր ծառի մը վրայ անցնելու։

Կը շարունակուի։